

ՏԵԱՌԴԹԵՐՆ ՈՒՄԱՏՈՒՅ

(ԱՐԱՐՈՒՏԻՄ ԱՇԽԱՏԱ ՊԱՏՐԱՀԻ) ՊԱՏՐԱՀԻ ԹԵՂԱԿ

ՀԱՅ ԱԽՈՐՔՍԱՆԻ ԵՒ ՎԱՆԻ ԱՂԲԻՒԹՆԵՐԻ

1

Այժմս գառնանքը Արամի ոչ պակաս նշանաւոր յաջորդին Սարգուրի Լ-ի նշանաւոր գործերից մինն էր անկասկած և Ուրարտուի իշխանութեան կեղրոնի Արաքսի ափերից Ասորեստանին մօտ Վանայ լճի ափին վոխագրելը, որի արեւելեան ափին՝ Վանի արձանագրութիւնների համաձայն՝ հիմնուած էր Տոսպ (Ներկայ Վան) քաղաքը, իսկ ինչ կը վերաբերի Բիայնա երկրին, որտեղ այդ քաղաքն էր գտնուում նա կարող էր շատ հին ժամանակներից Արաքսի վերայ գտնուուղ Ուրարտուի հետ անբաժան կապուած մի երկիր լինել և մինչև անգամ նրան որպէս կեղրոն ծառայել ⁵⁹):

Ամենայն հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ ոչ
թէ քաղաքական պայմաններն էին Բիայնան Ուրարտուի երկիր-
ների մէջ առաջնակարգ տեղ տալիս, այլ կրօնական (կուտը)

59) Եթէ ուղենանք արձանագրութիւնների քանակութեամբ որոշել Քիայնա երկրի տարածութիւնը, կը տեսնենք որ այդ գաւառը, որտեղ մեծ քանակութեամբ արձանագրութիւններ են գտնւում այնքան էլ մեծ չէ. - Այսպիսի սահմաններն են՝ Հիւսիսից Ալա-դաղը, Հարաւրից Էրտեղ Դաղը, արևելքից Կոտուրը, իսկ արևմոքից Վանայ լիճը:

պաշտամունքը։ Բիայնա երկրում, կամ նորան մօտ, գտնւումէր Ուրարտուի կրօնական պաշտամունքի տեղը, չաստուածներից ամենագլխաւորի՝ Խալդի չաստուծոյ բնակութիւնը. Բիայնա անուան հետ մենք հանդիպում ենք մի ուրիշ Խալդինա անուան, որը տրւումէր նոյն երկրին և նշանակում Խալդի չաստուծոյ երկիր⁴⁰⁾։ Ուրարտուի ժողովրդի համար այդ սուրբ երկիրը Բիայնա աշխարհի միայն մի առանձին գաւառ էր, և կարող է պատահել, որ Ուրարտուի թագաւորները շատ հին ժամանակներից իրանց իրաւունք էին համարում կրել այդ քաղաքականապէս աննշան երկրի տիտղոսը ազգային - կրօնական տեսակէտից։ Բայց, իհարկէ, պատճառը այդ կրօնական միտումները չէին, որ Ուրարտուի թագաւորներին հարկադրեցին տեղափոխել իւրեանց պետութեան ծանրութեան կեղրոնը հիւսիսից հարաւ, այլ բուն պատերազմական տեսակէտն էր, որ նոցա ներշնչեց այն եռանդու քաղաքականութիւնը Ասորեստանի վերաբերութեամբ, որին Արամից սկսած արդէն հետեւումէին Ուրարտուի թագաւորները։ Իրան պաշտպանողական գիծը Ուրարտուից և Արաքսից տեղափոխելով Եփրատ գետի վերայ, նոքա պաշտպանութեան զօրութեան և յարմարութեան համար կարիք զգացին հարաւ տեղափոխելու և իրանց մայրաքաղաքը նորանից մի նոր յենագէտ ստեղծելու Ասորեստանի գէմ։ Տեղը շատ յաջող էր ընտրուած, նա մի միապաղաղ ժայռ էր երեք կողմից լեռնաշըղթաներով շրջապատուած, իսկ արևմտեան կողմից տարածւում էր Վանայ լիճը։ Ուրարտուի թագաւորը, Վան փոխադրուելով, արդէն հէնց այդ բանով պարզ որոշեց իւր նորատակը՝ — հաստատել իւր զօրութիւնը հարաւում և միենոյն ժամանակ լինել

40) Վանի շրջակայքում գտնուած արձանագրութիւնների մէջ շատ յաճախ գործ է ածւում։ Hal dina երկիր, (գուցէ նաև քաղաքի անուն է)։ Սէյս, V, 13. XI, 3 և մանաւանդ XVII, 2. 4. 5. 6 և ուրիշները։ Ամենուրեք այդ տեղը հանդիսանումէ ինչպէս կրօնական պաշտամունքների մի կեդրոն և Վան քաղաքից, համարեա անբաժան։

տէր նաև հիւսիսի և միորեւ է կողմից իրեն վրայ յարձակուելիս անմատչելի համարել իրան։ Տոսպ քաղաքը անկասկած գոյութիւն ունէր և մինչեւ Սարդուրի Լը, թէև կարող է պատահել որ ուրիշ անուն եղած լինի, այսինքն Անիունու, որովհետեւ այդ անունով քաղաքի շինութեան մասին խօսումէ իւր երկու արձանագրութիւնների մէջ էլ Սարդուրի առաջինը. այդ արձանագրութիւնները գտնուեցան Վան քաղաքում և գրուած են Ասորեստանցոց լեզուով 41)։ Բայց նորա արձանագրութիւնների մէջ չեն յիշւում ոչ Տոսպը և ոչ էլ Բիայնան, այլ այդ բանի փոխարէն նա Ասորեստանական տեսակէտից և նորա գիտնական արտայայտութեան համաձայն իրան անուանումէ Նաիրի թագաւոր, որ անորոշ կերպով հիւսիսային ժողովուրդների իշխան կընշանակի։ Աւելի նշանաւորն այն է, որ նա Ասորեստանի թագաւորից փոխ է առնում և այս արքայական տիտղոսը, որ նոքա բարելականի հետ զուգընթացաբար կրումէին, այսինքն՝ մեծ թագաւոր, հզօր, թագաւոր տիեզերաց (sar kissati), թագաւոր թագաւորաց, որին բոլոր միւս թագաւորները հարկ են տալիս, և այլն։ Բարելոնի թագաւորներն այս տիտղոսին աւելացնումէին նաև թագաւոր թումերի և Ակիագի, ինչպէս այդ անումէին Ասորեստանի թագաւորները, երբ նրանք իրապէս տէր են դառնում բարելոնի, իսկ սար kissati տիտղոսը թէ մէկ և թէ միւս երկրի թագաւորները անխտիր գործ են դնում։ Որովհետեւ այդ վերջին տիտղոսը՝ sar kissati է (բառացի թագաւոր տիեզերաց)։ Ասորեստանցիները • Ասորեստանի թագաւոր, տիտղոսից առաջ էին գործ դնում և այդ բանը Ասորեստանական երկրում մնումէ միանգամայն անբացատրելի, ուստի հաւանական է, որ նա փոխ էր առնուած Ասորեստանից աւելի հին թագաւորութիւնից, որի աւանդութիւններն Ասորեստանցիք տեղափոխել էին իրանց ազգային թագաւորութեան վերայ։ Արդեօք փոխել էին իրանց ազգային թագաւորութեան վերայ։ Արդեօք վանի թագաւորին հասկանալի էր այդ տիտղոսի ամբողջ նշանակութիւնը, թէ՞ մեքենայաբար փոխադրեց այն իւր վերայ, անակութիւնը, թէ՞ մեքենայաբար փոխադրեց այն իւր վերայ,

ուանց նորա մասերի նշանակութեան վերայ ուշադրութիւն դաձր նելու, այդ իսկապէս մի երկրորդական հարց է, միայն այն է նշանաւորը, որ Ուրարտուի թագաւորը Նախի անունը (терминъ) հակագրումէ Ասորէստան անուան և իւր վրայ է առնում Ասորեստանի գահի բոլոր առաւելութիւնները բացի «Ասո-Նիշ» և Ա-Հառի Ասորեստան, տիտղոսից, որը և Ասորեստանի թագաւորները միշտ չէին գործածում: Այդ ձեռով և այն էլ Ասորեստանական լեզուով ի ցոյց տրուած արձանագրութիւնները ասորեստանցիների համար իսկապէս մի մարտահրաւէր պէտք է լինէր և տիեզերքի վերայ իշխելու իրաւանց յայտարարութիւն: Սիսալ կլինէր, եթէ կարծէինք որ այդպիսի տիտղոսներով՝ Ասորեստան, Ասորեստանէրէ, որին բոլոր Ասորեստանէրը հարի են պալիս, իրեն կոչելու մէջ, արտայայտումէ մի թոյլ ժողովրդի, դատարկ ոնապարծութիւնը, այդ բանը, եթէ միայն բառացի հասկանանք, ասորեստանցոց համար էլ չափազանցութիւն կլինէր, որովհետեւ Ասորեստանին էլ երբէք բոլոր թագաւորները հարկատու չեն եղել, այլ այդ ձեւը վկայումէ մի որոշ տիտղոսի հետ միացած բարձրագոյն իրաւանց մասին:

Վանի թագաւորները ասորեստանցւոց նման ամենայն լրջութեամբ ընդունումէին իրանց մեծ ինքնակալներ, որ կոչուած էին աշխարհիս բոլոր թագաւորութիւններն ու իշխանութիւններն իրենց հնագանգեցնելու: Խրաւանց այդ գիտակցութիւնը երեան եկաւ ոչ թէ նոցա կողմից իրենց զօրութիւնն ընդունելու շնորհիւ, այլ մի ընդարձակ ինքնակալութեան մասին եղած այն աւանդութիւնների, որ նոքա ժառանգել էին աւելի հին պետութիւններից: Եթէ համաձայնենք գերմանացի գիտնական Վինկլերի հետ, որ sar kissati տիտղոսը Ասորեստանցիք փոխ են առել հիւսիսային Միջագետքում եղած և Ասորեստանի զօրեղ միջոցին անյայտացած Խառանի թագաւորութիւնից, որ գտնւումէր Խաքուրի և Կվիրատի մէջ⁴²⁾, այն ժամանակ կարելի է ենթադրել որ Քետացւոց հետ հարևան թագա-

⁴²⁾ Untersuchungen zur altorientalischen Geschichte, 79 երեսից.

ւորովմեան մասին եղած աւանդութիւնները գեռ գոյութիւն ունէին հիւսիսային ժողովուրդների մէջ և Ասորեստանի թագաւորներից գործածած դարձուածները կենդանի նշանակութիւն և միտք ունէին նաև վանի թագաւորների համար այնպէս, ինչպէս և Ասորեստանցիների։ Այսպէս թէ այնպէս, Ուրարտուի թագաւորների յետագայ պատմութիւնը փաստօրէն հաստատումէ նոյն կողմից յայտարարուած տիեզերքի վերայ իշխելու իրաւանց իրականացումը։

Վերոյիշեալից պարզ երևումէ, թէ Աւրաբառուի և Նախրի ժողովրդի մէջ որքան տարածուել և խոր արմատներ էր թողել Ասորա - բարելական քաղաքակրթութիւնը։ Այդ բանը չի կարելի միայն Արամի և Ասորդուրի Լի ունեցած պատերազմներին և քաղաքական յարաբերութիւններին վերտագրել, թէև նոքա այդ բանին շատ են նպաստել։ Անհրաժեշտ է ենթագրել, որ և այդ հիւսիսային ցեղերը, եթէ ոչ այնպէս Ասորիքը, Պաղեստինէն ու Եգիպտոսը Քրիստոսից 15 դար առաջ, բայց յամենայն գէպս գտնումէին բարելական քաղաքակրթութեան անխուսափելի ազգեցութեան տակ։ Բարելական լեզուն, ինչպէս այդ երեւաց էլ - Ամառնոյում 45) գտնուած արձանագրութիւններից, այդ ժամանակիներում կրթութեան և միջազգային յարաբերութիւնների լեզուն էր։ Ներկայումս մենք ունինք Աիշագետքի հիւսիսային՝ գուցէ Աւրաբառուին ցեղակից ժողովուրդներից մինի Թուշրաթի թագաւոր Միսանի Ասորեստանի գրելով գրութիւնները իրենց մայրենի լեզուով գրուած 44)։ Ասորդուրի Լի ասորեստանական արձանագրութիւնները մեզ աւելուրի Լի ասորեստանական արձանագրութիւնները մեզ աւելում են ասում քան Մետանիները, վերջիններս պատկանում են քաղաքագի ուական լիշտակարան երի կարգին և կարող

45) H. Winckler, Der Tantafelfund von El-Amarna, Berlin 1889-90.

44) Jbid. № 17-ը Ներկայացնումէ Թուշրաթի ահագին արձանագրութիւնը իւր երկրի Եղուով Աւսուցչապետ Սէյսը, որը փորձ փորձեց վերծանել այդ արձանագրութիւնը, գտնումէ ազգակցութիւն Վանի Եղուից, Zeitschrift für Assiriolegie V, B. August. 1890, 266 երեսից:

Էին օտար լեզուով գրուած լինել. մինչդեռ Սարդուրիի յարատեւ արձանագրութիւնները, ոչ թէ օտարազգիների, այլ իւր ժողովրդի համար էին և ի յիշատակ յետագայ սերունդների: Պէտք է ենթադրել, որ այդ լեզուի գիտութիւնը ոչ թէ միայն բաւականին տարածուած էր, այլ որ կային ասորեստանական ուսումնականութեան կեդրոնները և գրականական պահարաններ, որտեղ պահում էին կաւէ այն տախտակները, որոնցով կարելի էր այդ արձանագրութիւններ փորագրելու հմտութիւն ձեռք բերել 45):

Արամէի և Սարդուրի Լի ջանքերով, ինչպէս ասացինք, Ուրատուի սահմանները պաշտպանուած էին ասորեստանցւոց յարձակումներից: Եւ իրաւ, Սաղմանասար թագաւորի յաջորդների՝ Շամշի-թամանի (825—812) և Թաման—Ներառի III ի (812—783) թագաւորութեան ժամանակ մենք այլեւս չենք տեսնում Ուրարտուի վերայ յարձակումը, թէև նոքա երկուսնէլ՝ առաջինը 13 և երկրորդը 28 տարուայ թագաւորութեան միջոցին հիւսիսի, Ուրարտուի նուաճումը իրանց ամենանշանաւոր խնդիրնէին համարում: Զնայած այս թագաւորների տարեգրութիւնների աշխատութեանը, մենք հնարաւորութիւն ունենք շատ ճշտիւ որոշելու նոցա քաղաքականութեան հիմնական ուղղութիւնը և նրա հետեւանքները: Շամշի=թամանի տարեգրութիւններն իրենց մէջ պարունակում են նորա չորս արշաւանքների պատմութիւնը որոնցից երեքը Նայիրի դէմ էին: Պատերազմական գործողութեանց անպարէզը,

45) Վանի հարաւ - արևելեան կողմ գտնուող Թոփրագ - գալէ թլուրը ներկայացնումէ մի քաղաքի մնացորդներ, որը Ասորեստանցւոց շինութիւնների ձևով աղիւսից էր շինած. այստեղ գտնուեցան զանազան իրեր և արձանագրութիւններ, որոնք ասորեստանական ծագումն ունին: Որ ասորեստանական հին գրութիւնների պահարանները Եգիպտոսում (Էլ-Ամառնայում) գտնուածի նման պէտք է եղած լինին և հիւսիսում: Որտեղ ասորեստանական քաղաքակրթութեանը նոյնքան էր տարածուած, որքան և Եգիպտոսում: այդ բանը պարզուեց Եգիպտոսում արած գիւտից յետոյ, Այս հանգամանքը հնագիտական ապագայ յետախուզութեանց միջոցին պէտք է ի նկատի ունենալ:

46) Rawl. 29—31.

որը սկզբներում գտնւումէր հեռու հիւսիսում՝ այժմս տեղափոխուած էր հարաւ, Ասորեստանին մօտ սահմաններում։ Երեւումէ, որ Նախրի Ուրարտուին ցեղակից բոլոր ժողովուրդները, հզօր Ուրարտուի խրախուսանաց և արթնացուցիչ օրինակի շնորհիւ մի հոգի եղան և կենդանի պատ կազմեցին Ուրարտուի և Ասորեստանի մէջ, իւր թագաւորութեան սկզբի տարում նա փորձեց նուաճել Նախրի երկիրները հիւսիսարեմուեան կողմից՝ Եփրատի ուղղութեամբ, սակայն ոչ թէ Ուրարտու մտնելը չը յաջողուեց նորան, այլ ըստ երեսյթին չը հասաւ և Եփրատին, չնայած որ նորա գործողութիւնները տարածւումէին մինչեւ Կերիսեմիշը (գարգամիշը), որին Նախրի երկիրներից մինն է համարում։ Այս պատերազմի մասին եղած տեղեկութեան համառօտութիւնը պարզ ապացոյց է նորա անյաջողութեան. Նորա յարձակումը Նախրի այդ մասի վերայինչպէս երեսումէ, ընդհատուեց հակառակ կողմի՝ Ուրմիոյ և կապից ծովի եղած քնակիչների խոռոշութեամբ։ Շամշի Թամանի տարեգրութիւնների մէջ իրար հետեւում են երկու արշաւանքներ ամեն մանրամասնութիւններով և պերճախօս ապացոյց են այն կենդանի ոգեսորութեան, որով բռնուել էին այդ երկիրները։ Ոչ թէ Ասորեստանի սահմանների մօտ եղած Խիրսինա, Խշպինա (երկուսն էլ կոչուած են իրենց կառավարիչների անունով), Խուրուշիկեան, Առնբէյն, Մանան, Պարշուան գաւառները, այլև կասպից ծովի և Մարաստանի մօտ եղածները՝ ինչպէս մի հոգի ոտքի ելան։ Նոցամէջ այլի է ընկնում Մաթալ երկիրը ⁴⁷, երեխ Միդեան (Մարաստանը), բայց ոչ թէ հնդկակերպական, այլ ալաղօղիական (Արարատեան), ինչպէս այդ երեսումէ նրանից, որ նա հանդէս է գալիս վերոյիշեալ երկիրների մէջ ⁴⁸)։ Տարեգրութեանց վրայ հիմնած

⁴⁷⁾ Այս բառը մեզ թւումէ վրացերէն. Մթա, մթայի-նշանակումէ սար, որից ծագումէ Մթիուլի կամ Մթիէլի գոյականը, որ նշանակումէ սարնցիք—Լեռնցիք։

⁴⁸⁾ Համեմատել բաման և Նիրարի արձանագրութեան Elipi, Harhar, Arreas, Mesu, Madai, Gizilbanda, Munna, Parsua, Allabria, Abdadana և ուրիշների հետ։

շատ գիտարէ որոշել, թէ որքան յաջողէին այդ արշաւանքները, բայց հետեւանքներից երեսումէ որ նոքա չը բացին Ասորեստանի թագաւորի տուաջ Ուրարտուի և մանաւանդ Միջերկրական ծովի ափին եղած երկիրների մուտքը, որ հիւսումումունեցած անյաջողութիւնների ժամանակ միանգամայն անհնար էր նոցա համար։ Նորա թագաւորութեան մնացած մասը մեզ յայտնի է Էպոնիմների օրէ-նըստրութեան յաւելուածներից, որտեղից իմանումենք, որ հիւսիսի վերայ նոր արշաւանքներ այլեւս տեղի չունեցան ⁴⁹⁾։ Նորա յաջորդ Շաման - Նիարի արձանագրութիւններն աւելի համառօտ են նրանցից. մենք գիտենք, որ այդ թագաւորը միայն մի արշաւանք գործեց Նախրի գէմ, որը նորա հօր Մետիայում ⁵⁰⁾ ունեցած արշաւանքի կատարեալ կրկնութիւն էր. բայց Էպոնիմների նոյն օրէնստրութիւնից մենք տեսնումենք, որ նա իւր 28 տարուայ թագաւորութեան ընթացքում ոչ մի անգամ Ուրարտու երկիր չըմտաւ և միայն միանգամ անցաւ Եփրատ գետը Ասորիքի Արպագ քաղաքը մտնելիս։ Նորա պատերազմական գործողութիւնների մեծ մասը կեղրոնացած էր հիւսիսաւրեւելեան կողմում Ուրմիոյ և Արաքսի մէջ գտնուած Մանա և Խարտ շիխա՝ Նախրի երկիրներում։ Այստեղից կարելի է եղրակացնել, որ արևելեան Նախրի հետ ամբողջ քառասուն տարուայ կուիւը ուղղակի հետեւանքն էր Նախրի ժողովրդների Վանայ լճի արևելեան ափին կտղմած անմատչելի կեդրոնի, որը Տիգրիս գետի ափին եղած Արմական թագաւորութեան գէմ բարձր պարզել էր Ալարոգիտական (Արտարատեան) ժողովուրդների գրօշակը։

Այս ժամանակաշրջանին վերաբերեալ ասորեստանական ազգի ըների աշխատութիւնը բաւականաչափ լրանումէ Վանի թագաւորների իրենց մայրենի լեզուով թողած արձանագրութիւններով։ Շամշի-Շամանի և Շաման-Նիարի թագաւորութեանց համապատասխանումէ Վանի թագաւորներից երկուսի Արդուրի Տնի

49) II Rewl. 68, 69, III Rawl., 1 Friedrich Delitzsch, Assirische Lesestücke 37—91.

50) I Rawl. 35, № I.

որդի Խշպուխնիի և սորո որդի Մինուախն 51) թագաւորութիւնը՝ Առաջնի սակաւաթիւ՝ ընդամենը հինգ արձանագրութիւններից 52) մենք իմանում ենք, որ նա իւր կեանքի վերջին տարիներում իրեն կառափարչակից զրեց Մինուսպին։ Նորա արձանագրութիւններից մինը 53) գտնուած է Քելիշին անցըի մօտ քարէ ուեան վերայ, Յովանդիսի և Աւշնէյի մէջ տեղը՝ Աւրմիու լճի հարաւարեմուեան կողմում՝ վերին Զարի մօտ։ Արովհետեւ և վերին Զարը անմիջապէս մանոււմ էր Ասորեստանի սահմանները և այդտեղից արդէն բացւում էր յարմար և կարծ ճանապարհ գէպի Ասորեստանի բոլոր մայրաքաղաքները՝ Աշուր, Կալահ և Նինուէ, ուստի այդքանով կարելի է չափել այն վտանգը, որում գրուած էր Ասորեստանը Վանի թագաւորի ալղպիսի համարձակ շարժումու։ Աորանով բացատրւում է այն, թէ ո՞վ էր Նաիրի (Ժողովուրդների) ցեղերին Ասորեստանի գէմ կանգնեցնելու պատճառը և ինչո՞ւ այդքան երկար ժամանակ ասորեստանցիների ուշըն ու միաքը դարձրած էր իրեն երկրի սահմանները հիւսիսարևելեան կողմից անվտանգ դարձնելու վերայ։ Խշպուխնիի ուրիշ արշաւանքների մասին մենք բան չգիտենք, բայց պէտք եղած բազմաթիւ վաստերից եզրակացնենք, որ նորա, գուցէ երկարատեւ թագաւորութեան միջոցին շատ բան էր կառարուած տէրութեան զօրութիւնը ընդարձակելու վերաբերութեամբ։ Վանայ ժայռի արևելեան կողմում նա շինեց մի նոր ամրոց ժայռի մէջ փորած մի ահագին քաղաք, (Ներկայում Մհերի դուռը՝ Meher-Kapussi), ահա այստեղ՝ ժայռի վերայ նա թողել է $1\frac{1}{2}$ սաժէն բարձրութիւն ունեցող մի ահագին արձա-

51) Մինուան պէտք որ մեր Մանաւազը եղած լինին ինչպէս այդ պարզ երկում է այդ երկու անունների նոյնութիւնից իսկ թէ Խշպուխնին մեր թագաւորներից որնէ, այդ մի գեռ անլուծելի խնդիր է ներկայանում։ իսկ Սարգուրիին մենք կարող ենք ընդունել Արա գեղեցկի տեղ, եթէ ընդունենք, որ այդ անունը Ս—Արա—Դուրին է։ բայց թէ ինչո՞ւ սկզբում ընկելէ Ս. Ճայնը, այդ մեզ համար՝ անբացատրելի է։ Ծան. թ. ոգ։

52) Աւյս, №№ 111—VI և LV.

53) № LVI. Այս արձանագրութիւնը պատկանում է Խշպուխնին ու Մենուախն, երբ վերջինս կառավարչակից էր իւր հօրը։

նագրութիւն, որով նա անմահացնումէ իւր յիշատակը իրեն մոցրած երկրի կրօնական ծխակատարութիւնների կազմակերպութիւնով 34): Այդ արձանագրութիւնից մենք իմանում ենք, որ նա իւր շինած քաղաքում ստեղծեց մի ամբողջ տաճար (ժողովածու) Ուրարտուի բազմաթիւ չաստուածների, որոշելելով նոցա նուէրները: Այստեղ ներկայանում են Նաիրի զանազան աստուածներ և նոցա միացումը ցոյց է տալիս Նաիրի թագաւորի իշխանութեան այդ ժամանակուայ ընդարձակութիւնը: Տեղական աստուածների շարքը սկսումէ Քալդինա երկրի աստուածներով, որը, ինչպէս ասացինք, վերջերումն պարզուեց որ Բիայնան է (Biai—na, որ իսկապէս նշանակումէ Բիային պատկանող երկիր, որը հաւանականաբար հին աստուածներից մինն էր), ապա հետեւում են արդինայ կամենու քաղաքների և չորրորդ տեղում Տոսրի կամ Վան քաղաքի չաստուածը: Սորանից երեսումէ, որ ոչ Տոսրը և ոչ էլ մանաւանդ Բիայնան ինքնըստինքեան մի նշանաւոր գեր չէին խաղում կրօնական պաշտամունքի կողմից (միայն Խալդինին մօտ լինելը կարող էր նոցա կրօնական պաշտամունքի կողմից նշանակութիւն տալ). ապա գալիս են Արծուինի, Երիշիա, Ուիշենի, Ալգոնի, Սուինի, Ատկանա, Նիսիադուրունի և Բաբանի: Սոքա բոլորն էլ ինչպէս երեսումէ Ուրարտուի երկիրներն են կամ որ նոյնն էր այդ ժամանակաշրջանում՝ Բիայնան: Մենք ճշգիւ չըգիտենք այդ երկիրների դիրքը, միայն վերոյիշեալից կարող ենք եղաւակացնել, որ Խաղուինին իւր թագաւորութիւնից կամենումէր ստեղծել Նաիրի ժողովուրդներից ոչ թէ միայն քաղաքական, այլ և ազգային—կրօնական միութեան մի կեդրոն: Եթէ վերոյիշեալ երկիրների միացումը նորա թագաւորութեան հետ առանց պատերազմի չէր, (Արդինիի նուածման մասին խօսումէ Կելիշինի արձանագրութեան մէջ) այնու ամենայնիւ պէտք է կարծել, որ նորա իշխանութիւնը նուիրուած էր ոչ այնքան իւր թագաւորութիւնն ընդարձակելուն, որքան ներքին միութեան և հաստատուելուն և զօրացնելուն:

Թարգ. ԵՎԼՇՅ. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ.

34) № V. Բնագիրը կրկնուած է երկու անգամ: